

**ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը  
հեռուստատեսության միջազգային օրվա կապակցությամբ**

Ջերմորեն շնորհավորում եմ Սյունիքի մարզի հեռուստատեսությունների բոլոր աշխատակիցներին՝ հեռուստատեսության միջազգային օրվա կապակցությամբ:

Չնայած զանգվածային լրատվամիջոցներից հեռուստատեսությունն ամենաուշն է ձևավորվել, սակայն ժամանակակից աշխարհում տեղեկատվության մատուցման ոլորտում և հանրային կյանքի վրա իր ներգործությամբ հեռուստատեսությունը գերազանցել է մյուս զանգվածային լրատվամիջոցներին:

Այս առումով, երիցս կարևորում եմ ձեր դերը որպես մարզի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքի կարևորագույն իրադարձությունների տեղեկատվության աղբյուր և հասարակական կարծիքի ձևավորման անփոխարինելի միջոց:

Մաղթում եմ առողջություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ ձեր չափազանց բարդ ու պատասխանատու աշխատանքում:

**Հարգանքներով**

**ՀՀ Սյունիքի մարզպետ**

**Սուրիկ Խաչատրյան**

**21 նոյեմբերի 2011թ.**